



6. ԼՈՒՏՈՎԻԿՈՅ ՍԱՅՑ. — Երեւոյ Յիսուսի

ԱՅԼԵՒԱՅԼԻ

Խ Ն Ո Ւ Ն Դ Ը

ՆԿԱՐՁԱՅ ՎՐՁԻՆԻՆ ՆԵՐՔԵՒ

□ ♦ □

(Շար. տես Բազմավէպ 1924, էջ 408)

6.

Լուսովիկոյ Սայց, իբր արդի Ֆրա Ան-
ճելիքոյ մը, սքանչելի տիպար մ'եղած է
ուղղամտութեան և արհեստի բարձրու-
թեան: Ապրեցաւ և նկարեց ազօթելով,
առանց փոյթ ունենալու աշխարհի վա-
յելքներու և առօրեայ համբաւի. եռան-
դուն և հաստատամիտ իր կրօնական ըզ-
գացմանց մէջ. սրբազան նկարչութեան
յիւրաւի վերջին ներկայացուցիչն եղաւ:

Ի Հոովմ ծնաւ, բնիկ գերմանական
ծագամբ, ուր արդէն հայրը Աղեքսանդր՝
նշանաւոր եղած էր իւզմանրկի, տամկա-
նկարի և պղնձագրութեան մէջ. և մասնա-
ւորապէս Սլավոնիոյ Տիաքովար քաղաքի
մայր եկեղեցւոյ նկարներով՝ Շրոտմայէր
արքեպիսկոպոսի յանձնարարութեամբ:

Որդին ևս հետեցեալ հօրը ասպարիզին.
երկուցն ալ ծարաւի էին հազար չորս հա-
րիւրի մաքուր և կրօնասէր Դպրոցին,
ջանալով վերադարձնել սրբազան արուես-
տը այն բարձրաստիճան արտայայտու-
թեան՝ զոր ան շատոնց կորսնցուցած էր:
Տասնըվեց տարեկան՝ իր ճարտարութիւնն
սկսաւ ցուցնել. հազիւ քսանամեայ՝ ի մէջ
այլոց՝ նրբաճաշակ նկար մը գծեց՝ զԱս-

տուածամայրն Յիսուս ի գրկի՝ նուագածու
հրեշտակներով, զոր զնեց Գեր. Շղրոս-
մայէր՝ Զակապրիայիակաղեմիայինհամար:

Այլեւս իր համբան ընդհանրացած էր.
Տիարեովար, Գերմանիա, Դրեւիզ, և մաս-
նաւորապէս Հոռովմայ ըստ եկեղեցիներ և
պալատներ լի են անոր ճոխ և փափուկ
նկարներով. ինչպէս Լեւոն ԺԳ. Գահա-
նայպետին հրամանաւ՝ Զահերու Դահլիճը

նեն՝ հանդերձ Հին Կտակարանի օրինակ-
ներով:

Հոն ի Լորեդոյ ամենահամեստ տան մը
մէջ մենակեցի կեանք կը վարէր: Մեծ
համակրութիւն կը տածէր մերձաւոր ա-
րեւելեան ազգաց, մանաւանդ Հայոց հան-
դէպ. և հակառակ դրած արգելքին՝ օտար
չընդունելու իր առանձնոցին մէջ՝ բացա-
ռաբար կ'ընդունէր տողերս զրոյը, զուար-



7. ԱԼՎԻԶԷ ՎԻՎԱՐԻՆԻ. — Հրեշտակաց օրօրը

ի վատիկան՝ բազմաթիւ տամկանկարներով
զարդարեց, զորս անկարելի է մի առ մի
թուել համառօտ կենսագրութեանս մէջ:
Բացաստի, մանաւանդ թէ իր գլուխ — զոր-
ծոցը կրնանք համարիլ Լորեդոյ քաղքին
մայր եկեղեցւոյն մէջ, ուր, ըստ աւանդու-
թեան, փոխադրուած է Ս. Աստուածա-
ծնայ տունը, Գերմանական մատրան հոյա-
կապ և շքեղազարդ պատկերներն, որոնց
համար տասը տարի աշխատեցաւ Ասոնք
ամբողջ Ս. Կուսին վարքը կը ներկայացը-

ճախօսութեան վայրկեաններ անցընելով
միասին:

Ի Բատուա եւս Ս. Անտոնայ եկեղեց-
ւոյն մէջ սկսած էր երեք մատուռներ
նկարել. սակայն տակաւին առաջինը չէր
վերջացուցած՝ երբ սրտի հիւանդութեամբ
յանկարծամահ եղաւ 1908 թուականին՝
64 տարեկան հասակին մէջ, թողլով ա-
նոնց աւարտումը իր քաջավարժ աշակեր-
տին՝ Պ. Պիանէզզիլի, ըստ իր թողուցած
ծրագրին:

7.

Լուսովիկոյ կամ Աւիգէ վիժարինի մին է քանի մը նկարիչ եղբայրներու, որ Մուրանոյ կղզիէն են (վենետիկոյ մօտ), և

զական ոճոյ նմանութիւն են հելլենական գործերը, զուգանեան ազդեցութեան ներքեւ: Սա հաւանօրէն Լորենցոյ Լոզզոյ՝ ուրիշ նշանաւոր նկարչի մը վարժապետն եղած է:



Յ. ՊԵՆՏՈՅ ԱՆՃԵԼԻԿՈՅ. — Իրենց Քրիստոսի (Ֆրիւթցէ. Վառք Ս. Մարկոսի)

ծաղկեցան ամբողջ հնգետասներորդ դարուն մէջ: Ասոնց զլիաւորներէն մին է Աւիգէ, որոյ գծած մէկ պատկերը կը ներկայացնենք հոս, որ կը պահուի Վենետիկոյ Ս. Փրիլիչ եկեղեցւոյ մէջ: Բիւզան.

Տ.

Յովհաննէս Ֆրիւթցի, աւելի ծանօթ Հրեշտակային Եղբայր (Fra Beato Angelico) անուամբ, Փլորենտեան աշխարհահռչակ նկարիչ, ծնած է 1387 թուին

և վախճանած 1455ին, Սուրբ և արուեստագետ միանգամայն, Պատանի հարուստ և կարգէ զուրա տաղանդով օժտեալ՝ կառող էր փայլուն կեանք մը վարել աշխարհի մէջ, և սակայն նախամեծար համարեցաւ առանձնութիւնը և լուսթիւնը Դոմինիկեան կրօնաւորաց մօտ։ Ուսումնասիրեց Մազաչչիոյի եղանակը, իր առաջին գործերը մանրանկարներ էին լի

զանոնք շնորհաց ներշնչմամբ արտադրեալ կը համարէր։ Որպէս զի բան մը չկարեւնայ իր բարեպաշտ աշխատութիւններէն զինքը ետ կեցընել՝ ամէն եկեղեցական պատիւ մերժեց, և ի մասնաւորի Փլորենտիոյ արքեպիսկոպոսութիւնը։ Դոմինիու խառնուրդը փափուկ և ներդաշնակ է. իր հրեշտակներուն և սուրբերուն զլուխները գերմարդկային զիգեցկութիւն մ'ունին։ Ան-



Յ. ՊԵՆՏՆԻՆԻՆԻՆԻ — Երկրպագութիւն Մոգոց
(Ֆրիւմոյէ. Վառք Ս. Մարկոսի)

չքնաղ հրապոյրով, Քծած պատկերներն օրըստօրէ հասարակաց սրանշացումը կը զրգռէին։ Ոչ մէկ արուեստագէտ կրցած է դէմքերու վրայ այսքան զգացում ներշնչել։ Միայն սրբազան պատկերներ ու զեց նկարել, որ թուով անհամար են։ Երբ Թաչելեալ փրկելը կը նկարէր՝ այստեղն արցունքով կը թրջէին։ Դեղաւոր (palette) ձեռք չէր առնէր՝ առանց Աստուծոյ օգնութիւնն հայցելու։ Երբեք չէր սրբազրեք իր պատկերները, վասն զի

խոնջ աշխատութեամբ և երկարակեցութեամբը ժամանակ ունեցաւ բազմաթիւ գործեր արտադրել, ի Հոռով Նիկողայոս Ե.ի հրամանաւ վատիկանի մէկ մատուռը նկարազարդեց։ Իր գործերէն Փլորենտիա ունի. Տապանակը, Թագադրութիւն Ս. Կոստան, Պատկերներ Ս. Կոստան, և մասնաւորապէս Ս. Մարկոսի վանքը շատ մը անոք հրաշալի երկերէն կը պարունակէ։

